# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16.06.2022թ.

ք.Երևան

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել է տարբերակ 5-ի նյութական իրավունքի բաժնի 9"33-րդ, 16"35-րդ, 18"42-րդ, 20"11-րդ 10"31-րդ, 11"45-րդ , 26"47-րդ, 14"9-րդ, 21"38-րդ, 28"57-րդ հարցերը,

***33-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի վերլուծությունը խարդախության մասին չեն բխում քրեական օրենսդրության դրույթների ճիշտ վերլուծությունից: Պաշտոնապար անձին փոխանցվող գումարի մի մասը վերցնելը չի վկայում խարդախության հանցակազմի առկայության մասին: Բացի այդ, մեջբերված վճռաբեկ դատարանի դիրքորոշումները կիրառելի չեն սույն դեպքում: Հետևաբար հավակնորդի կողմից պատասխանի այս տարբերակի ընտրությունը և բողոքում ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***35-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումները խնդրում առկա պայմանների անբավարարության պարագայում ողջամիտ են և ընդունելի հանձնաժողովի համար, հետևաբար տրվում է 1 միավոր:*

***42-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, քանզի ծանր վնաս պատճառելը ավազարկության առանձնապես ծանրացնող հանգամանք է, իսկ քրեաիրավական նորմերի մրցակցության կանոններից ելնելով ծանրացնող /զենքի գործադրմամբ/ և առանձնապես ծանրացնող*

*հանգամանքների մրցակցության պայմաններում արարքը չէր կարող որակվել ծանրացնող հանգամանքով, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***11-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, քանզի ավազակության հանցակազմի յուրահատկությամբ պայմանավորված սույն խնդրի պայմանների պարագայում չի կարող որակվել որպես զենքի գործադրմամբ /ծանրացնող հանգմանքով/, քանզի առկա է առանձնապես ծանրացնող հանգամանք, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***31-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա փաստերից, քանզի քրեական պատասխանատվությունից ազատելու որևէ հանգամանք առկա չէ: Միևնույն ժամանակ կաշառք ստանալու հանցակազմն ավարտված է համարվում կաշառքի առաջարկը ընդունելու պահին, հետևաբար տեղին չէ հավակնորդի պնդումը նաև այս մասով, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***45-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

***47-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի կողմից մեջբերված դրույթները չեն բխում փաստական սխալի պարագայում արարքի որակման կանոններից, սխալ է կիրառվել նաև իդեալական համակցության պարագայում արարքի որակման կանոնները, հետևաբար ներկայացված դրույթը և դրանցից բխող եզրահանգումները ընդունելի չեն, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***9-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, խիստ թերի են ինչը հնարավորություն թույլ չի տալիս ուղեցույցում նշված ճիշտ տարբերակից շեղվող տարբերակը ճիշտ համարելու համար: Հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումներից հասկանալի չէ, թե ինչու է ընտրվել դ/ տարբերակը՝ յուրացում և յուրացման օժանդակություն: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

***38-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում գործող ՀՀ քրեական օրենսդրության նորմերի ճիշտ մեկնաբանությունից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***57-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում գործող ՀՀ քրեական օրենսդրության նորմերի ճիշտ մեկնաբանությունից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

# Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***7585*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 21 միավորը բարձրացնել 2 միավոր՝ արդյունքում արձանագրել 23 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ